

գլուխ Արտաւազդայ. սաստեր նմա չերթալ ի պատերազմ վասն մանկութեան ժամանակին տիոց: 25 Իսկ նա առ Նորա ականե զնաց ընդ Նոսա. բայց ապա յետոյ վառեալ կազմեալ պատրաստեալ զկնի պատերազմին:

26 Այլ յորժամ զտիկինն ամենայն աղախնիւն իւրեանց յուղարկեցին յամուրն, եւ ինքեանք վառեալք կարգեալք կազմեալք ի պատերազմն, ի մի վայր գումարեալք, Նշանս արծակեալք դրաւս փողփողեալս, ըստ Գեւղն աւան ի դուրս ելաներ ընդ կողմն արեւմտից. եւ անդէն ընդ առաջ ելեալ Նոցա Մերութանայ իւրով զնդան՝ որ եկեալ էր ի վերայ Նոցա: 27 Եւ չարագործն մեղաւոր Մերութանն զիւր զգէնն եւ զարդ եւ զնշանն սաղաւարտին բազմաց եղեալ էր զնոյն աւրիւնակ, եւ զբազումս յիւր կերպարանեալ էր ի մէջ իւրոյ զնդին, եւ ինքն զիւր Նշան ոչ ունէր: 28 Սակայն Մանուէլ իբրեւ տեսանէր զնոցա գունդն, հանդերձ իւրով զնդան, առիւծաբար վարազաւրէն յարծակեալ՝ ի Նոցա գունդն խառնեցաւ. ուշ եղեալ այնոցիկ՝ որ զՄերութանայ Նշանսն ունէին, համարէր եթէ զՄերութանն սպանանիցէ: 29 Եւ զբազում ախոյեանից հատանէին զգլուխս, որք զնոյն զնորին Մերութանայ ունէին զնշանս, եւ տեսանէին զի չէր նա:

30 Ապա խաւսել սկսանէր սպարապետն Մանուէլ ընդ իւրում նիզակակցին Բաբկան, եւ ասէր: 31 Տեսանե՞ս, քանի՜ խաբեաց զմեզ կախարդն Մերութանն. այլ իմ եւ Նորա յառաջու շատ լեալ ի միոջ վայրի ի հաշտութեան ժամանակի, Նշան մի գիտեմ ես զնորա. զի յորժամ ի ձի հեծեալ¹ էր, երան բարձի Նորա ոչ յանձին եւ ի ծունկն ոչ հասանէր, այլ ի բացեայ կայ ի ձիոյ անտի: 32 Արդ եկ զոյգ հասարակ այսմ Նշանի ուշ դիցուք, թերեւս ճանաչել կարասցուք զդիւք քուէիցն զկախարդն: 33 Ապա զոյգ միտ եղեալ երկոցունցն, եւ տեսեալ զՄերութանն, այնու Նշանաւ ծանեան, տեսին զի յայլակերպս լեալ էր, զի զիւր Նշանսն ոչ ունէր: 34 Ապա ծայն տուեալ յառաջ կոչեաց զՄերութանն Մանուէլ, եւ ասէ ցնա՝ թէ Ա՛յ կախարդ, ցե՞րք խաբես զմեզ, եւ վասն քո եւ զայլս եւս տաս ջարդել. այլ մեք ծանեաք զքեզ զի աւադիկ կաս, եւ ապրել քեզ չիք հնար այսաւր ի ձեռաց մերոց. զի այսաւր էած կատարեաց զչարիս քո Տէր Աստուած ի գլուխ քո, եւ մատնեաց Տէր ի ձեռս մեր: 35 Իսկ յորժամ զայն լսէր Մերութանն, անդէն վաղվաղակի նիզակ առեալ, յառաջ խաղացեալ, ախոյեան ելանէր Մանուէլի: 36 Սակայն յորժամ հարկանէին նիզակաւքն, քանզի երկոքեան արքն յաղթէին, երկոքեան ի ձիոյն յերկիր անկանէին, եւ անդէն նիզակակիցն Մանուէլի Բաբիկ տէր գաւառին Սիւնեաց հասանէր, նիզակաւ ի վերուստ ի վայր ի կողին կարէր ընդ գետինն, եւ ոչ կարէր յառնել: 37 Իսկ զսպարապետն Մանուէլ իւր վարաւանդասպապքն յերիվարն

¹ Օրինակ մի յաւելու՝ ելեալ